ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՔՎԵ
5 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

www.elections.am

Հանրաքվեի կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԹՎՈՎ 38

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ «Հանրաքվեի մասին» օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրաքվեի ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովում

- ✔ 2 անդամ նշանակում է «ԱՅՈ» քարոզչության կողմը.
- ✔ 2 անդամ նշանակում է «ՈՉ» քարոզչության կողմը.
- ✔ 3 անդամ տարածքային ընտրական հանձնաժողովը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովն

- իր լիազորություններն իրականացնելիս անկախ է և որևէ միջամտություն նրա գործունեությանն արգելվում է,
- իր լիազորություններն իրականացնում է օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա,
- ընդունում է անհատական իրավական ակտեր, որոնք ենթակա են պարտադիր կատարման:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել

- ✘ ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար դատվածություն ունեցող անձինք.
- ✘ Ազգային ժողովի պատգամավորները,
- ✘ նախարարները և նրանց տեղակալները,
- ✘ համայնքների ղեկավարները,
- ✘ մարզպետները և նրանց տեղակալները,
- ✘ դատավորները,
- ✘ դատախազները,
- ✘ քննչական մարմիններում ծառայողները,
- ✘ ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատական ակտերի հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, փրկարար ծառայություններում ծառայողները,
- ✘ զինծառայողները,
- ✘ վստահված անձինք,
- ✘ քարոզչության կողմերի լիազոր ներկայացուցիչները,
- ✘ դիտորդները:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

- ✓ կազմակերպում է հանրաքվեի քվեարկությունը,
- ✓ ամփոփում է քվեարկության արդյունքները հանրաքվեի տեղամասում.
- ✓ կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն.
- ✓ հանձնաժողովի կնիքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության 2 օրինակը, տեխնիկական սարքավորումները, հանրաքվեի փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների պարկը և քվեատուփը ներկայացնում է տարածքային ընտրական հանձնաժողով:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ հանձնաժողովի քարտուղարը:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐՆ

- ***գումարվում են*** Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում և սահմանված օրակարգով, «Հանրաքվեի մասին» օրենքով սահմանված ժամկետներում

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐԸ

- ***հրավիրվում է*** տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով

1-ին նիստը հրավիրվում է հանձնաժողովի կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին.

- հանձնաժողովի անդամները ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի իրավունքների և պարտականությունների ծանոթացման տեքստը

2-րդ նիստը հրավիրվում է քվեարկության նախորդ օրը.

- վիճակահանությամբ բաշխվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, հարյուրական կապերով դասավորում են քվեաթերթիկները և քվեարկության ծրարները

3-րդ նիստը հրավիրվում է քվեարկության օրը, ժամը 7.00-ին.

- վիճակահանությամբ որոշվում են քաղաքացիներին գրանցող, քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող, ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամները, շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող անդամը

4-րդ նիստը հրավիրվում է քվեարկության ավարտից՝ ժամը 20.00-ից հետո՝

- սկսվում է տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփումը

- Նիստերն անցկացվում են տեղամասային կենտրոնում
- Նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի անդամների կեսից ավելին
- Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ նիստին իր մասնակցությունը նշում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ ստորագրելով իր ազգանվան դիմաց
- Նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ Հանձնաժողովի քարտուղարը
- **Հանձնաժողովի անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ կամ դեմ**
- Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերի
- Նիստում հարցերը քննարկվում և գործառույթներն իրականացվում են «Հանրաքվեի մասին» օրենքով, Ընտրական օրենսգրքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով սահմանված հաջորդականությամբ և կարգով
- **Քվեարկության ավարտից հետո՝ մինչև տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը, Հանձնաժողովի նիստը չի կարող ընդհատվել**
- **Հանձնաժողովի անդամները վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով պետք է կրեն իրենց վկայականները**

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների կարգավիճակը _____

Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

- ✓ նախապես ծանոթանալու Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին,
- ✓ ելույթ ունենալու Հանձնաժողովի նիստում,
- ✓ ներկայացնելու առաջարկություններ, առարկություններ և պահանջելու, որ այդ հարցով անցկացվի քվեարկություն,
- ✓ նիստի մասնակիցներին տալու հարցեր, ստանալու պատասխաններ,
- ✓ հայտնելու քվեարկության նախապատրաստման, կազմակերպման և անցկացման վերաբերյալ իր կարծիքը,
- ✓ պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում,
- ✓ իրականացնելու «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված այլ լիազորություններ:

Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

- ✓ կատարել Հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները,
- ✓ մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորություն-ները,
- ✓ մասնակցել ընտրական հանձնաժողովի անդամների համար կազմակերպվող մասնագիտական դասընթացներին,
- ✓ մասնակցել Հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը,
- ✓ ստորագրել քվեարկության արդյունքների արձանագրությունը,
- ✓ կրել «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված այլ պարտականություններ:

Ընտրական հանձնաժողովի անդամներին արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վարձատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի կրկնապատիկի, հանձնաժողովի քարտուղարը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի վարձատրության 70 տոկոսի, իսկ հանձնաժողովի անդամները՝ նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափով: Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը 68.000 դրամ է: («Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք ՀՕ-66-Ն):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները վարձատրվում են հանրաքվեի արդյունքներն ամփոփելուց հետո:

! ***Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին վարձատրություն չի տրվում, եթե նա չի ստորագրել տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը, կամ եթե նրա լիազորությունները վաղաժամկետ դադարել են:***

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե՝

- ✗ նա չունի տեղամասային ընտրական հանձնաժողովում նշանակվելու իրավունք,
- ✗ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամը ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում,
- ✗ զորակոչվել է,
- ✗ դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների կամ դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար, կամ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը կամ որպես պատիժ կիրառվել է կալանք կամ ազատազրկում:

Ինքնաբացարկի մասին դիմում կարող է ներկայացվել ***մինչև քվեարկության օրվան նախորդող 5-րդ օրվա ժամը 18.00-ն՝*** *տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:*

- Ինքնաբացարկի մասին դիմումը դիմումատուն ներկայացնում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին
- այդ մասին անհապաղ տեղեկացնում է իրեն նշանակողին
- դիմումը պետք է պարունակի դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը, տեղամասային ընտրական հանձնաժողովի համարը, դիմում ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը
- դիմումը պետք է ստորագրված լինի դիմումատուի կողմից

Հանրաքվեի առանձին տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու կամ այդ տեղամասերում վերաքվեարկություն նշանակվելու դեպքում այդ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած, և նրանք չեն կարող ընդգրկվել վերաքվեարկություն անցկացնող տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում:

Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոնանկության կարգը _____

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ կարող են պաշտոնանկ արվել **միայն, եթե քվեարկության նախորդ օրը կամ քվեարկության օրը ցուցաբերում են ակնհայտ անգործություն**, որի հետևանքով կարող է վտանգվել քվեարկության նախապատրաստումը կամ քվեարկության բնականոն ընթացքը կամ քվեարկության արդյունքների ամփոփումը:

Այդ դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ կամ քարտուղար նշանակում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմից:

Տարածքային ընտրական հանձնաժողովը կարող է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ վաղաժամկետ դադարեցնել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները, **եթե հանձնաժողովի անդամը կոպտորեն խախտել է Ընտրական օրենսգրքի դրույթները** (բացառությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի հերթական նիստերից անհարգելի բացակայության դեպքի):

(ԸՕ 45-րդ հոդված, մասեր 5, 8)

Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները դադարում են հանրաքվեի արդյունքներն ամփոփվելուց 7 օր հետո:

Հանրաքվեի արդյունքները դատարան բողոքարկվելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները դադարում են դատական ակտի հրապարակման օրվա հաջորդ օրը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում) և քվեարկության արդյունքներն ամփոփելու ընթացքում քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել՝

- Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամները՝ համապատասխան հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ,
- Քարոզչության յուրաքանչյուր կողմի մինչև **2 ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁ**,
- յուրաքանչյուր զանգվածային լրատվության միջոցը ներկայացնող **1 ԼՐԱԳՐՈՂ** և **1 ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ** կամ տեսաձայնագրման **1 ՕՊԵՐԱՏՈՐ**,
- յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև **2 ԴԻՏՈՐԴ**՝ թարգմանչի ուղեկցությամբ,
- տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կուսակցությունից կամ կազմակերպությունից՝ **1 ԴԻՏՈՐԴ**,
- Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների և այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները՝ այցելուի կարգավիճակով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

! Ընտրական հանձնաժողովների նիստերը, այդ թվում՝ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստը, ինչպես նաև քվեարկության ընթացքը վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են **լուսանկարել, տեսանկարահանել՝ չխախտելով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների քվեարկության գաղտնիության իրավունքը:**

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

! Վստահված անձինք, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, դիտորդները, այցելուները վերնազգեստի վրա ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՏԵՍԱՆԵԼԻ ՁԵՎՈՎ ՊԵՏՔ Է ԿՐԵՆ նիստում ներկա գտնվելու իրավունքը հավաստող վկայական:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ԱՐԳԵԼՈՒՄ Է ընտրական հանձնաժողովում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնազգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունն ընտրական հանձնաժողովում և քվեարկության սենյակում:

(ԸՕ 46-րդ հոդված, մաս 8)

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ԴԻՏՈՐԴՆԵՐ, ԱՅՑԵԼՈՒՆԵՐ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Վստահված անձինք հանրաքվեի ժամանակ ներկայացնում են քարոզչության կողմերին:

Վստահված անձն իրավունք ունի՝

- ⇨ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա գտնվելու քվեարկության սենյակում,
- ⇨ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, **ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ.**
  - ↳ տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող հանրաքվեի փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակների),
  - ↳ դատարանի համապատասխան վճիռներին, քաղաքացուն տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին,
  - ↳ քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին,
- ⇨ չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ հանրաքվեի փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակների, քվեարկության կտրոնների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակներից,

Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելն արգելվում է:

- ⇨ «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում բողոքարկելու ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը.
- ⇨ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների և ինքնասոսնձվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին,
- ⇨ չմիջամտելով հանձնաժողովի անդամի և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի աշխատանքներին՝ ներկա գտնվելու ընտրողների նույնականացումն իրականացնող մասնագետի, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների գրանցումն իրականացնող, քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող, քվեատուփը հսկող անդամների կողքին և հետևելու նրանց աշխատանքներին,

- ընտրական հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դիտարկումներ և առաջարկություններ,
- պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում,
- իրականացնելու «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

! Վստահված անձինք պարտավոր են գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար:

(ԸՕ 34-րդ հոդված, մաս 3)

Դիտորդները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կուսակցություններ, միջազգային կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպություններ:

Այցելուներ են՝ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ներկայացուցիչները, ինչպես նաև այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները:

Դիտորդը, այցելուն, ՀԼՄ ներկայացուցիչն իրավունք ունեն՝

- ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում,
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների և ինքնասոնձվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ.
  - տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակների),
  - դատարանի համապատասխան վճիռներին, քաղաքացուն տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին,
- չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ հանրաքվեի փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակների, քվեարկության կտրոնների),

Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելն արգելվում է:

- ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների ու քվեատուփի դիտարկման համար,
- հրապարակայնորեն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հայտնելու կարծիք, անելու հայտարարություն՝ հանրաքվեի կազմակերպման և անցկացման վերաբերյալ,
- լուսանկարել, տեսանկարահանել վերահաշվարկի աշխատանքները,
- օգտվելու «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

! Դիտորդն իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում:

Դիտորդը, այցելուն, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն ***իրավունք չունեն՝***

- ✘ միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին.
- ✘ միջամտելու քվեարկության ընթացքին.
- ✘ իրականացնելու քարոզչություն.
- ✘ ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

! Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն պարտավոր են գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար:

(ԸՕ 32-րդ հոդված, մաս 4)

Հանձնաժողովի նիստին, ինչպես նաև քվեարկության օրը քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց վերաբերյալ գրառում է կատարվում գրանցամատյանի երկրորդ մասում՝ յուրաքանչյուրի համար նախատեսված տեղում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգում է **հանձնաժողովների նիստին, ինչպես նաև քվեարկության օրը քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձի** անձը հաստատող փաստաթուղթը և ընտրական հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունքը հավաստող համապատասխան վկայականը:

Հանձնաժողովի գրանցամատյանում նշվում է քարոզչության կողմի անվանումը և վստահված անձի անունը, ազգանունը, իսկ դիտորդի դեպքում՝ ՀՀ կուսակցության կամ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության անվանումը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի դեպքում՝ զանգվածային լրատվության միջոցի անվանումը և ԶԼՄ ներկայացուցչի անունը, ազգանունը, ինչպես նաև ներկայանալու և դուրս գալու ժամերը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, այցելուի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի (իրավունք չունեն) դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, այցելուին դուրս հանելու տեղամասային կենտրոնից կամ որևէ այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, **բացառությամբ՝**

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի՝

Դիտորդի *կողմից քարոզչության որևէ կողմին աջակցելու, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:*

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի՝

Զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի *կողմից Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է Ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:*

Ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի՝

Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա

- ✓ Հանձնաժողովն իրավասու է հանձնաժողովի **անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ** սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը: Որոշումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին, և ամեն դեպքում **այդ որոշմամբ սահմանված թիվը չի կարող նվազ լինել 15-ից**:

Նշված սահմանափակումը չի տարածվում այցելուների, միջազգային դիտորդների և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա:

- ✔ **Եթե քվեարկության սենյակում, արդեն իսկ ներկա են սահմանված թվով դիտորդներ և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, ապա Հանձնաժողովի նախագահն իրավասու է արգելել նոր դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մուտքը քվեարկության սենյակ: Սույն գործառույթի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում Հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ:**
- ✔ **Հանձնաժողովի կողմից քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը սահմանելուց հետո, Հանձնաժողովի նախագահը չի կարող դուրս հրավիրել քվեարկության սենյակում, արդեն իսկ ներկա գտնվող դիտորդներին և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին:**

ԿԸՀ 17.06.16թ. N 35-Ն որոշում

! *ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ*

Հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ սահմանված կանոնակարգը խախտելու, ինչպես նաև Հանձնաժողովի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքերում՝ վստահված անձի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի նկատմամբ կիրառվում է նախազգուշացում: ***(ԿԸՀ 17.06.16թ. N 35-Ն որոշում)***

Նախազգուշացումից հետո վստահված անձի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի կողմից Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, վստահված անձը, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչը, դիտորդը հեռացվում են Հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակից և տեղամասային կենտրոնից:

Դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, վստահված անձին Հանձնաժողովի նիստից և տեղամասային կենտրոնից հեռացնելու որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

! *ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ*

Ընտրական հանձնաժողովի նիստերից, իսկ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակից և տեղամասային կենտրոնից ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ հեռացման իրավական հնարավորություն Ընտրական օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված չէ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, վստահված անձին Հանձնաժողովի նիստից և տեղամասային կենտրոնից հեռացնելու մասին որոշումը գրառում է գրանցամատյանում, լրացնում է հանձնաժողովի անդամների տվյալները և հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գրառում է իր քվեարկությունը և ստորագրում:

Մինչև Հանձնաժողովի նիստից և տեղամասային կենտրոնից հեռացնելը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, վստահված անձին ծանոթացնում է իր վերաբերյալ կայացված որոշմանը, դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչը, վստահված անձը ստորագրում է գրանցամատյանում՝ որոշման տակ:

Ստորագրելուց հրաժարվելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը դրա վերաբերյալ կատարում է գրառում:

Քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը սահմանելու, ինչպես նաև դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, վստահված անձին նախազգուշացնելու, տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստից և տեղամասային կենտրոնից հեռացնելու մասին Հանձնաժողովի գրանցամատյանում **գրառվում է** Հանձնաժողովի որոշումը՝ նշելով պատճառը:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿ _____

Քվեարկությունն անցկացվում է տեղամասային կենտրոնում՝ այդ նպատակով կահավորված դահլիճում, սրահում, սենյակում և այլ տարածքում (քվեարկության սենյակ): Քվեարկության սենյակի կահավորման համար պատասխանատու է **համայնքի ղեկավարը:**

Հանրաքվեի քվեարկության ժամանակ շուրջ 1500 տեղամասերից իրականացվելու է քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի միջոցով:

Տեսանկարահանումն իրականացվելու է անշարժ տեսախցիկների միջոցով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն:

- **քվեարկության խցիկները պետք է տեղադրվեն միմյանցից առնվազն մեկ մետր հեռավորությամբ և այն դիրքով, որ քաղաքացին քվեարկելիս լինի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը,**
- **քվեատուփը, տեխնիկական սարքավորումները, հանձնաժողովի անդամների աշխատասեղանները պետք է տեղադրվեն քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց համար տեսանելի տեղում:**

Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության սենյակի կահավորման ժամանակ պետք է ապահովի, որ՝

- **տեսախցիկի տեսադաշտում լինեն քվեատուփը, քացաքացիների գրանցման, քվեարկության ծրարների ու քվեաթերթիկների հատկացման և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները,**
- **տեսանկարահանման և համացանցային հեռարձակման իրականացման ընթացքում պահպանվի Ընտրական օրենսգրքով սահմանված՝ քվեարկության գաղտնիության սկզբունքը:**

(ԸՕ 8-րդ հոդված, մաս 11.1)

Քվեարկության սենյակի գծագիր



ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն հանրաքվեի օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների տեղամասի ցուցակում համարակալման շարունակականությամբ՝ ըստ առանձին բաժինների, ներառվում են նաև՝

- **ըստ գտնվելու վայրի քաղաքացիների ցուցակը.**
  - ✓ *այս ցուցակում կարող են ընդգրկվել նաև փվյալ տեղամասի տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները*
- **հաշվառում չունեցող քաղաքացիների ցուցակը.**
- **տեղամաս գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակը.**

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից գործածվող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում առանձին սյուներում նշվում են քաղաքացու՝

- ❒ հերթական համարը տվյալ տեղամասի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում.
- ❒ ազգանունը, անունը, հայրանունը (հայրանունը՝ համապատասխան հաշվառման փաստաթղթերում առկայության դեպքում).
- ❒ ծննդյան ամսաթիվը.
- ❒ հաշվառման վայրի հասցեն, Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիների դեպքում՝ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն.

<u>ինչպես նաև նախատեսվում է ևս 4 սյունակ՝</u>

- ❒ քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի տվյալների համար.
- ❒ քաղաքացու ստորագրության համար.
- ❒ քաղաքացիների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անհատական կնիքի համար.
- ❒ լրացուցիչ նշումների համար:

Հանրաքվեի ժամանակ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակներ կազմում են նաև.

- զորամասերի հրամանատարները,
- քրեակատարողական հիմնարկների պետերը,
- ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները:

Զորամասում հաշվառված քաղաքացիների ցուցակներ

Զորամասում հաշվառված քաղաքացիների ցուցակը կազմում, էջակալում, ցուցակների յուրաքանչյուր էջ ստորագրում և կնքում է զորամասի հրամանատարը:

- Եթե տվյալ տեղամասում քվեարկելու են զորամասում հաշվառված քաղաքացիներ, ապա
  - տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահից, **ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը**, ստանում է՝ զորամասում հաշվառված քաղաքացիների ցուցակը՝ փակ և կնքված ծրարով,
  - որը պահպանվում է հենց այդ վիճակով,
  - չի փակցվում տեղամասային կենտրոնում,
  - և բացվում է միայն քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից այն պահին, երբ տեղամաս են այցելում զորամասի ցուցակում ընդգրկված քաղաքացիները:

Քրեակատարողական հիմնարկում հաշվառված քաղաքացիների ցուցակներ

Քրեակատարողական հիմնարկում հաշվառված քաղաքացիների ցուցակը կազմում, էջակալում, ցուցակների յուրաքանչյուր էջ ստորագրում և կնքում է քրեակատարողական հիմնարկի պետը: Քրեակատարողական հիմնարկում հաշվառված քաղաքացիների ցուցակը կազմվում է քվեարկության օրվանից 3 օր առաջ, որում ընդգրկվում են քվեարկության օրը 18 տարին լրացած, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կալանավորված անձինք և ոչ մեծ ու միջին ծանրության, հանցագործությունների համար դատապարտված և ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալները:

- Քրեակատարողական հիմնարկում գտնվող տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը ստանում է քրեակատարողական հիմնարկի պետից՝ **քվեարկության օրվանից 2 օր առաջ**:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները լիազոր մարմնի կողմից կազմվում են նաև **էլեկտրոնային եղանակով և** նախապես ներբեռնվում են համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորման մեջ և պարունակում են՝

- ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը (հայրանունը՝ համապատասխան հաշվառման փաստաթղթերում առկայության դեպքում).
- այն տեղամասի համարը, որի ցուցակում է ընդգրկված ընտրողը.
- ընտրողի հերթական համարը համապատասխան տեղամասի ընտրողների ցուցակում.
- ընտրողի ծննդյան ամսաթիվը.
- ընտրողի հաշվառման վայրի հասցեն, Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողների դեպքում՝ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն.
- ընտրողի նույնականացման քարտի, կենսաչափական անձնագրի և ոչ կենսաչափական անձնագրի համարը (եթե ընտրողն ունի անձը հաստատող համապատասխան փաստաթղթեր).
- տվյալ տարածքի ընտրողների համար՝ նաև թվային շտեմարանում առկա լուսանկարը (եթե ընտրողը ստացել է նույնականացման քարտ կամ կենսաչափական անձնագիր կամ ոչ կենսաչափական անձնագիրը ստացել է 2008 թվականի հունվարի 1-ից հետո):

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

էլեկտրոնային եղանակով չեն կազմվում և տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող տեխնիկական սարքավորման մեջ չեն ներբեռնվում՝

- ✗ զորամասերում կազմվող քաղաքացիների ցուցակները.
- ✗ քրեակատարողական հիմնարկներում կազմվող քաղաքացիների ցուցակները.
- ✗ ձերբակալված անձանց պահելու վայրերում կազմվող քաղաքացիների ցուցակները.
- ✗ ստացիոնար բուժման մեջ գտնվող քաղաքացիների լրացուցիչ ցուցակները:

ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՆԵՐ _____

- **Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմվող լրացուցիչ ցուցակ, որում ընդգրկվում են՝**

- քվեարկության օրը դատական ակտ ներկայացրած քաղաքացիները,
- համապատասխան տեղամասի նկարագրում ընդգրկված հասցեում հաշվառված, սակայն տվյալ տեղամասի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակից դուրս մնացած քաղաքացիները՝ լիազոր մարմնի տեղեկանքի հիման վրա,
- այն քաղաքացիները, որոնք Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմին ներկայացրել են համապատասխան հանրաքվեի տեղամասի ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին դիմում, դիմումը չի մերժվել, սակայն նրանք չեն ընդգրկվել համապատասխան ցուցակում:

Քաղաքացուն քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակում ընդգրկելու համար հիմք համարվող փաստաթուղթը՝ դատական ակտը կամ լիազոր մարմնի տեղեկանքը, ԿՑՎՈՒՄ ԵՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿԻՆ:

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած լրացուցիչ ցուցակի յուրաքանչյուր էջ ստորագրում և կնքում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: **Քվեարկության ավարտից հետո ցուցակի վերջում հանձնաժողովի նախագահը նշում է քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակում ընդգրկված քաղաքացիների ընդհանուր թիվը**:

- **Ստացիոնար բուժհաստատությունում քվեարկողների լրացուցիչ ցուցակ,** որում ընդգրկվում են ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող քաղաքացիները:

Ստացիոնար բուժհաստատությունում քվեարկությանը մասնակցող քաղաքացիների լրացուցիչ ցուցակը կազմում է լիազոր մարմինը, որում նշվում են ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը և հաշվառման վայրի հասցեն:

- **Ձերբակալված անձանց պահելու վայրի քվեարկողների լրացուցիչ ցուցակ,** որում ընդգրկվում են միայն ձերբակալված անձանց պահելու վայրում գտնվող՝ քվեարկության օրը 18 տարին լրացած ձերբակալված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Ձերբակալված անձանց պահելու վայրում գտնվող քաղաքացիների լրացուցիչ ցուցակը կազմում է ձերբակալված անձանց պահելու վայրի ղեկավարը՝ քվեարկության օրը և **տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին հաղորդում է ձերբակալված ընտրողների թիվը**:

Ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ցուցակը էջակալում, ցուցակի յուրաքանչյուր էջ ստորագրում և կնքում է ձերբակալված անձանց պահելու վայրի ղեկավարը:

ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆԱՑՈՒՄԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ _____

Քվեարկության օրվանից 3 օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը լիազոր մարմնից ստանում է՝

- ✔ լիազոր մարմնի կազմած՝ տեղամասային կենտրոնում փակցվող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները (այդ թվում՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող քաղաքացիների լրացուցիչ ցուցակը),
- ✔ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից գործածվող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները՝ կազմված մատյանի ձևով (այդ թվում՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող քաղաքացիների լրացուցիչ ցուցակը),
- ✔ տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները,
- ✔ քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմվող լրացուցիչ ցուցակի համար անհրաժեշտ ձևաթղթերը:

Ստացված ցուցակներն ու ձևաթղթերը պահվում են տեղամասային կենտրոնում՝ չհրկիզվող պահարանում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակի, այդ թվում՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող քաղաքացիների լրացուցիչ ցուցակի օրինակը **ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆԻՑ 2 ՕՐ ԱՌԱՋ** տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Այս ցուցակները տեղամասային կենտրոնում մնում են փակցված մինչև քվեարկությանը հաջորդող յոթերորդ օրը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՍՏԱՆԱԼԸ

Քվեարկության նախորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովից ստանում է՝

- ⇨ քվեաթերթիկները (տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվի մինչև 5 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան քաղաքացիների թվից 10-ով ավելին),
- ⇨ քվեարկության ծրարները (տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվի մինչև 5 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան քաղաքացիների թվից 10-ով ավելին),
- ⇨ տվյալ տեղամասի համար տպագրված ինքնասոսնձվող դրոշմանիշերի ամբողջ տպաքանակը,
- ⇨ համարակալված կտրոնները,
- ⇨ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը,
- ⇨ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները,
- ⇨ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած քանակով տեխնիկական սարքավորումները (ներբեռնված ընտրողների էլեկտրոնային ցուցակներով), այլ պարագաներ և **մասնագետի կոդը պարունակող ծրարը** (ՀԱՎԵԼՎԱԾ 2)
- ⇨ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները /առնվազն 4-ական օրինակներ/,

! ***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ***

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգում է, որ քվեարկության արդյունքների վերաբերյալ հատկացված արձանագրությունների բոլոր օրինակներում տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից լրացված լինեն հետևյալ տողերը՝

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների հիմնական ցուցակում	Լրացվում է տարածքային հանձնաժողովի կողմից
Տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թիվը	Լրացվում է տարածքային հանձնաժողովի կողմից
Տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված համարակալված կտրոնների թիվը	Լրացվում է տարածքային հանձնաժողովի կողմից

- ⇨ քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքի ձևաթղթերը,
- ⇨ ծրարներ հանրաքվեի փաստաթղթերը փաթեթավորելու համար,
- ⇨ տեսակավորված և փաթեթավորված հանրաքվեի փաստաթղթերը հավաքելու համար մեկանգամյա օգտագործման մեծ պարկ,
- ⇨ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների համար մեկանգամյա օգտագործման փոքր պարկ,
- ⇨ քվեախցիկ՝ յուրաքանչյուր 750 քաղաքացու հաշվով առնվազն մեկ հատ,
- ⇨ քվեատուփ,
- ⇨ շրջիկ արկղ, եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկություն է կազմակերպելու ստացիոնար բժշկական հաստատությունում կամ ձերբակալված անձանց պահելու վայրում:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ավարտել ստորև նշված բոլոր գործողությունները մինչև քվեարկության նախորդ օրը՝ ժամը 24:00-ն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքների բաշխումը

- Տեղամասային ընտրական հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ բաշխում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքները:

! Վիճակահանությանը մասնակցում են տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները՝ այդ թվում հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

Այդ նպատակով՝

- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստում հանձնաժողովի նախագահը անհատական կնիքները տեղավորում է վիճակահանության արկղի մեջ,
- ✓ հանձնաժողովի անդամները, այդ թվում հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, ազգանունների, իսկ ազգանունները համընկնելու դեպքում՝ անունների (հայրանունների) այբբենական հերթականությամբ վիճակահանության արկղից հանում են մեկական անհատական կնիք,
- ✓ հանձնաժողովի անդամները տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի համապատասխան մասում իրենց ազգանվան դիմաց դնում են անհատական կնիքների նմուշները:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվում և դասավորում է քվեաթերթիկները՝ առանձնացնելով հարյուրական քվեաթերթիկ,
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվում է նաև քվեարկության ծրարները և առանձնացնելով հարյուրական ծրար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը փաստաթղթերի պահպանման համար նախատեսված պահարանում տեղադրում է՝

- ❒ քվեաթերթիկները,
- ❒ քվեարկության ծրարները,
- ❒ ինքնասոսնձվող դրոշմանիշերը,
- ❒ համարակալված կտրոնները,
- ❒ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը,
- ❒ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները,
- ❒ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները,
- ❒ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների լրացուցիչ ցուցակները,
- ❒ արձանագրությունների ձևաթղթերը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության նախորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողով են ներկայանում նաև մասնագետները, և

- ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ հաստատելով իրենց ներկայությունը,
- ուսումնասիրում են տեխնիկական սարքավորումների տեղադրման վայրը, քվեարկության սենյակում հոսանքի սնուցման առկայությունը,
- ստուգում են տեխնիկական սարքավորումների կոմպլեկտայնությունը՝ անխափան սնուցման սարքերի (UPS), ռաուտերների, էլեկտրական երկարացման լարերի առկայությունը և սարքինությունը
- **քվեարկության նախորդ օրը մասնագետները պետք է միացնեն տեխնիկական սարքավորումները և իրականացնեն փորձնական թեստավորում**
- տեխնիկական սարքավորումների էլեկտրասնուցումն իրականացվում է քվեարկության սենյակում առկա էլեկտրական հոսանքի սնուցման աղբյուրից
- անխափան սնուցման սարքին (UPS) միացվում է միայն ռաութերը, իսկ տեխնիկական սարքավորումները ռաութերին միացվում են ցանցային լարերով
- մասնագետը տեխնիկական սարքավորումը հանում է տուփից, տեղադրում քվեարկության սենյակում այդ նպատակով հատկացված սեղանին, միացնում է էլեկտրական հոսանքի սնուցման աղբյուրին և ստուգում տեխնիկական սարքավորման տպիչում համապատասխան թղթի առկայությունը, որից հետո միացնում է տեխնիկական սարքավորումը և մուտքագրում ստուգման վեցանիշ կոդը՝ **111111**:
  - Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվում են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ, ապա տուփերից հանվելուց հետո բոլոր տեխնիկական սարքավորումները ցանցային լարերով միացվում են ռաութերին, որից հետո ստուգվում է նաև կապի առկայությունը տեխնիկական սարքավորումների միջև

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

- **քվեարկության նախորդ օրը տեխնիկական սարքավորումների աշխատանքն ստուգելուց հետո դրանք չեն անջատվում: Տեխնիկական սարքավորումները չեն անջատվում նաև էլեկտրական հոսանքի սնուցման աղբյուրից**
- Նշված աշխատանքների արդյունքների, ինչպես նաև ի հայտ եկած ցանկացած թերության մասին մասնագետն անհապաղ իրազեկում է տեխնիկական սարքավորումների կազմակերպված սպասարկումն իրականացնող աջակցման կենտրոնի անդամներին:
- Մասնագետը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին տեղեկացնում է տեխնիկական սարքավորման անխափանության և գործարկման պատրաստ լինելու մասին, որից հետո կարող է հեռանալ տեղամասային կենտրոնից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանրաքվեի փաստաթղթերը պահարանում տեղադրելուց հետո պահարանը փակում և փակման մասը թղթով սոսնձում է: Սոսնձված թղթի վրա ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը. հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս կարող են ստորագրել սոսնձված թղթի վրա:

Փակված, փակման մասում հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից ստորագրված թղթով սոսնձված չհրկիզվող պահարանը, տեխնիկական սարքավորումները, անխափան սնուցման սարքերը, ռաուտերները տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պահպանության է հանձնում ոստիկանության ծառայողներին, որի մասին գրանցամատյանում կազմվում է արձանագրություն:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները քվեարկության օրը պետք է ներկայանան տեղամասային կենտրոն *ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ ԺԱՄԸ 06:45-ԻՆ:*

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝

- ստուգելով պահարանին սոսնձված թղթի ամբողջականությունը,
- տեխնիկական սարքավորումների, անխափան սնուցման սարքերի, ռաուտերների, էլեկտրական երկարացման լարերի առկայությունը,

ստիկանության ծառայողներից ընդունում է չհրկիզվող պահարանը, որի մասին գրանցամատյանում կազմվում է արձանագրություն:

Այդ պահին չհրկիզվող պահարանը դեռ չի բացվում:

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը տեղամասային կենտրոնում սկսվում է ԺԱՄԸ 7:00-ԻՆ:

Նիստի ժամը տեղափոխվել չի կարող:

Ուշադրություն

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողով ներկայացած մասնագետները ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ հաստատելով իրենց ներկայությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովն իր նիստում՝ վիճակահանությամբ, որոշում է հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխումը: Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վիճակահանությանը չեն մասնակցում:

Վիճակահանությունն իրականացվում է հետևյալ կերպ՝

- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պատրաստում է վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամների թվին հավասար թվով իրարից չտարբերվող թերթիկներ, որոնցից՝
  - մեկի վրա նշում է «ցուցակ-1», իսկ տեղամասում 1000-ից ավել քաղաքացու դեպքում՝ հաջորդ թերթիկի վրա՝ «ցուցակ-2» բառերը,
  - մեկի վրա նշում է «քվեաթերթիկ-1», իսկ տեղամասում 1000-ից ավել քաղաքացու դեպքում՝ հաջորդ թերթիկի վրա՝ «քվեաթերթիկ-2» բառերը: Շրջիկ արկղի միջոցով քվեարկություն կազմակերպելու դեպքում երկրորդ թերթիկի վրա նշում է «քվեաթերթիկ և շրջիկ արկղ» բառերը,
  - մեկի վրա նշում է «քվեատուփ» բառը,
  - մեկի վրա նշում է «շրջիկ արկղ» բառերը՝ շրջիկ արկղի միջոցով քվեարկություն կազմակերպելու դեպքում, եթե տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը չի գերազանցում 1000-ը,

- ✓ բոլոր թերթիկները (նաև նշում չպարունակող) ծալում է այնպես, որ միմյանցից չտարբերվեն և տեղավորում վիճակահանության արկղի մեջ,
- ✓ Հանձնաժողովի անդամները՝ ըստ ազգանունների, իսկ ազգանունները համընկնելու դեպքում՝ անունների (հայրանունների) այբբենական հերթականությամբ, վիճակահանության արկղից հանում են մեկական թերթիկ:



Ամբողջ աշխատանքը բաժանվում է 6 հերթափոխի՝ յուրաքանչյուրը 2 ժամ տևողությամբ՝

1) ժամը 8:00-10:00-ը,
2) ժամը 10:00-12:00-ը,
3) ժամը 12:00-14:00-ը,
4) ժամը 14:00-16:00-ը,
5) ժամը 16:00-18:00-ը,
6) ժամը 18:00-20:00-ը:

- ➢ Վիճակահանությունների արդյունքները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Հերթափոխ	**Քաղաքացիներին գրանցող** (մինչև 1000 քաղաքացու հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1000-ից ավելիի դեպքում ՝ երկու անդամի)		**Քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող** (մինչև 1000 քաղաքացու հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1000-ից ավելիի դեպքում ՝ երկու անդամի)		**Ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու** (առնվազն մեկ անդամի)	**Շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող**
	«ցուցակ 1»	**«ցուցակ 2»**	**«քվեաթերթիկ 1»**	**«քվեաթերթիկ 2»** (կամ «քվեաթերթիկ և շրջիկ արկղ»		
8-10						
10-12						
12-14						
14-16						
16-18						
18-20						

- ➢ Յուրաքանչյուր հերթափոխի դիմաց՝ դատարկ վանդակներում նշվում է վիճակահանության արդյունքում համապատասխան գործառույթն իրականացնող հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը:
- ➢ Վիճակահանության արդյունքում, ըստ հանձնաժողովի անդամներին բաժին ընկած թերթիկների նշումների, հանձնաժողովի անդամների միջև բաշխվում են առաջին հերթափոխի կողմից քվեարկությունը կազմակերպելու համար նախատեսված պարտականությունները:
- ➢ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ամեն հերթափոխի ժամանակ իրականացնում է այն գործառույթը, որի անվանումը պարունակող թերթիկը վիճակահանությամբ բաժին է ընկել իրեն, բացառությամբ շրջիկ արկղի միջոցով քվեարկությունը կազմակերպելու մասով:

- Հանձնաժողովի նախագահը վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը:
- Հանձնաժողովի նախագահը կազմակերպում և վերահսկում է քվեարկության անցկացումը, անհրաժեշտության դեպքում օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում:
- Հանձնաժողովի քարտուղարը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, գրառումներ է կատարում գրանցամատյանում, օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

- բացում է չհրկիզվող պահարանը.
- հանում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները և հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնում է նախորդ օրվա վիճակահանությամբ իրեն տրամադրված անհատական կնիքը.
- հանում է հանձնաժողովի կնիքը և գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը.
- ստուգում է քվեատուփի (առկայության դեպքում նաև շրջիկ արկղի) դատարկ լինելը, և մինչև փակելը այն ցուցադրում նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց.
- փակում, հատուկ կապիչներով և ինքնասոսնձվող ժապավեններով կնքում է քվեատուփը (առկայության դեպքում՝ նաև շրջիկ արկղը).
- հանում է մեկ փաթեթ (հարյուր հատ) քվեաթերթիկ և մեկ փաթեթ (հարյուր հատ) քվեարկության ծրար ու հանձնում քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող հանձնաժողովի անդամին (անդամներին).
- հանում է հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները և հանձնում գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին (անդամներին).
- հանում է հարյուր ինքնասոսնձվող դրոշմանիշ և հատկացնում ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին՝ այդ մասին գրառում կատարելով գրանցամատյանում:

Վերոնշյալ բոլոր գործողությունների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

Ուշադրություն

Տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված համարակալված կտրոնները պահարանից հանվում և գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին (անդամներին) են հատկացվում **միայն հետևյալ դեպքերում՝**

- տեխնիկական սարքավորումը չաշխատելու դեպքում,
- քրեակատարողական հիմարկներում քվեարկություն կազմակերպելու դեպքում,
- շրջիկ արկղով քվեարկություն կազմակերպելու դեպքում:

Մինչև տեղամասային կենտրոնի բացումը՝

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ մասնագետը ստուգում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը, մուտքագրում է հանրաքվեի տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ

05/04/2020

Գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք

Ընտրական տեղամաս:	20/02
Ընտրողների ցուցակում ընդգրկվածների թիվը	1578
Տեխնիկական սարքով գրանցված ընտրողների թիվը	0
Տեղեկանքը տպած է	15:06:32
Սարք	VAD1

- եթե տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվում է մեկից ավելի տեխնիկական սարքավորում, ապա յուրաքանչյուր մասնագետ ստուգում է իր կողմից սպասարկվող տեխնիկական սարքավորման աշխատանքը և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը.

Տեղեկանքը (տեղեկանքները) սոսնձվում է (են) տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ էջ 11:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նշված բոլոր գործողությունները կատարվում են այն հաշվարկով, որպեսզի ԺԱՄԸ 8:00-ի դրությամբ կատարված և ավարտված լինեն:

Եթե քվեարկության օրը՝ ժամը 8:00-ին

- *մինչև 1 000 քվեարկող ունեցող տեղամասի դեպքում 5-ից պակաս թվով տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ է ներկայացել*
- *1 000-ից ավելի քվեարկող ունեցող տեղամասի դեպքում 7-ից պակաս թվով տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ է ներկայացել*

տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն անհապաղ տեղեկացնում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին *և չներկայացած անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարում են, և անդամների թիվը համապատասխանաբար* ***մինչև 5 անդամ և մինչև 7 անդամ*** *լրացնում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:*

Եթե քվեարկության օրը՝ ժամը 9.00-ի դրությամբ*, տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա անդամների թիվը նվազ է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ից, ապա հանձնաժողովի կազմը համալրվում է այնպես, որ ապահովվի հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ը:*

Ժամը 8:00-ին տեղամասը պետք է լինի լիարժեք պատրաստ քվեարկությունն սկսելու համար: Հանձնաժողովի անդամներն ու մասնագետները պետք է զբաղեցրած լինեն իրենց տեղերը: Սեղաններին պետք է լինեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ԺԱՄԸ 8:00-ԻՆ, հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում քաղաքացիների մուտքը քվեարկության սենյակ:

Տեղամասային կենտրոնը բացվելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն անմիջապես տեղեկացնում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տեղամասը բացված լինելու մասին:

✘ Արգելվում է տեղամասային կենտրոն զենք, զինամթերքով մուտք գործելը: Զինծառայողները, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում ծառայողները տեղամասային կենտրոն մուտք են գործում ոչ շարային կարգով, առանց զենքի, զինամթերքի:

> Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային կենտրոն զենքով մուտք գործել կարող են միայն ոստիկանության ծառայողները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

! Քվեարկության սենյակում կուտակումներից ու խառնաշփոթից խուսափելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պետք է հսկի և պարբերաբար ստուգի, թե քվեարկողներից բացի ովքեր են ներկա տեղամասային կենտրոնում, և արդյո՞ք բոլորն ունեն տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք:

- Եթե քվեարկության սենյակում գտնվող քվեարկողների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա հանձնաժողովի նախագահն իրավունք ունի սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվող քաղաքացիների թիվը, **բայց ոչ պակաս, քան 15 քաղաքացի՝ քաղաքացիներին քվեարկության սենյակ թողնելով հերթով՝ մեկ-մեկ:** Սույն գործառույթի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ:

Քվեարկության ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝

! **ՄԻՆՉԵՎ ԺԱՄԸ 11:30-Ը, 14:30-Ը, 17:30-Ը ԵՎ 20.30-Ը** տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդում է համապատասխանաբար մինչև ժամը **11:00-Ն, 14:00-Ն, 17:00-Ն ԵՎ 20:00-Ն** տվյալ տեղամասում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թիվը:

Հաղորդված թվերը գրառվում են նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացին քվեարկությանը մասնակցում է անձամբ. լիազորված քվեարկությունն արգելվում է:

1 *Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների գրանցումը*

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր քաղաքացի պետք է գրանցվի: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ քաղաքացին չի կարող ստանալ քվեաթերթիկ և քվեարկել:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՏԵՆՈՒՄ Է ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ.

Քաղաքացու համար անձը հաստատող փաստաթուղթ են համարվում՝

- ✓ *անձնագիրը,*
- ✓ *նույնականացման քարտը* (ID քարտ),,
- ✓ *կենսաչափական անձնագիրը,*
- ✓ *անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից,*

զինծառայողների համար՝

- ✓ *զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զորամասի կազմված քաղաքացիների ցուցակում,*

կալանքի տակ գտնվող և պատիժը կրող՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների համար՝

- ✓ *քրեակատարողական հիմնարկում գտնվող քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը,*

! ***Անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ քաղաքացուն քվեարկության չթողնելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական սարքավորումում առկա տեղեկություններից պարզվում է, որ քաղաքացին ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած, անձը հաստատող փաստաթուղթ:***

ՄԱՍՆԱԳԵՏԸ ՍՏՈՒԳՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ԱՌԿԱ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Եթե քաղաքացին ներկայացրել է ***ԱՅԼ ԱՆՁԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ***, ապա մասնագետն այդ մասին տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

ՄԱՍՆԱԳԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ Է ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Եթե քաղաքացին

ներկայացրել է անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը

ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը տեխնիկական սարքավորման կողմից չի ընթերցվում

ՄԱՍՆԱԳԵՏԸ ՍՏԵՂՆԱՇԱՐՈՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՆՁՆԱԳՐԻ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԻ ՀԱՄԱՐԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

! Եթե ընտրողը **գրանցված է** տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և որպես անձը հաստատող փաստաթուղթ **ներկայացրել է.**

- **նույնականացման քարտը,**
- **կենսաչափական անձնագիրը**
- **2008 թվականի հունվարի 1-ից հետո տրված ոչ կենսաչափական անձնագիրը**

ԷԿՐԱՆԻՆ ՀԱՅՏՆՎՈՒՄ ԵՆ՝

1. տվյալ ընտրողի լուսանկարը,
2. ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը
3. կանաչ նշան

- **մինչև 2008 թվականի հունվարի 1-ը տրված ոչ կենսաչափական անձնագիրը**

ԷԿՐԱՆԻՆ ՀԱՅՏՆՎՈՒՄ ԵՆ՝

1. ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը
2. կանաչ նշան՝ *առանց ընտրողի լուսանկարի*

I. **ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԷԿՐԱՆԻՆ ՀԱՅՏՆՎՈՒՄ Է ԿԱՆԱՉ ՆՇԱՆ** ընտրողը ներմուծում է իր աջ ձեռքի ցուցամատի մատնահետքը: Դրա անհնարինության դեպքում մատնահետքը ներմուծվում է հետևյալ առաջնայնությամբ՝ ձախ ձեռքի ցուցամատը, աջ ձեռքի միջնամատը, ձախ ձեռքի միջնամատը, աջ ձեռքի մատնեմատը, ձախ ձեռքի մատնեմատը, աջ ձեռքի ճկույթը, ձախ ձեռքի ճկույթը, աջ ձեռքի բթամատը, ձախ ձեռքի բթամատը: **Մատնահետքը ներմուծելու անհնարինության դեպքում մատնահետքի ներմուծման քայլը բաց է թողնվում:**

II. Դրանից հետո տեխնիկական սարքավորումը տպում է ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, քվեարկության կտրոնի հերթական համարը, իսկ թվային շտեմարանում առկա լինելու դեպքում՝ նաև ընտրողի լուսանկարը պարունակող քվեարկության կտրոն:

III. Մասնագետը տպված քվեարկության կտրոնը անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է քաղաքացուն:

IV. Քաղաքացին մոտենում է գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին: **Գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամը** քաղաքացուց վերցնում է քվեարկության կտրոնը, ցուցակում գտնում է քաղաքացու տողը, վերջինս ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ստորագրության համար նախատեսված սյունակում և հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում քաղաքացուն:

Եթե քաղաքացին գրանցվել է տեխնիկական սարքավորման միջոցով և ստացել է քվեարկության կտրոն, սակայն հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում նրա տվյալների դիմաց առկա է ստորագրություն, ապա

- գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն այդ մասին հայտնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: Քվեարկությանը չմասնակցած քաղաքացին, ում տվյալների դիմաց ցուցակում առկա է ստորագրություն, **ստորագրում է հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում՝ իր տվյալների դիմաց: Քաղաքացու ստորագրության կողքին գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամը դնում է իր անհատական կնիքը:**

Եթե քվեարկության մասնակիցը **ԳՐԱՆՑՎԱԾ ՉԷ** տվյալ տեղամասի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում, ապա էկրանին հայտնվում է **ԴԵՂԻՆ** նշան: Այս դեպքում քաղաքացին ունի հետևյալ կարգավիճակներից որևէ մեկը.



1) քաղաքացին ընդգրկված չէ տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և սարքավորմանը **ՀԱՅՏՆԻ Է,** թե որ տեղամասի ընտրող է,
2) քաղաքացին ընդգրկված չէ տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և սարքավորմանը **ՀԱՅՏՆԻ ՉԷ,** թե որ տեղամասի ընտրող է,
3) քաղաքացին ներկայացրել է անձը հաստատող ժամկետանց փաստաթուղթ, մինչդեռ ունի մեկ այլ՝ վավերական փաստաթուղթ:

⇨ **Նշված դեպքերում քաղաքացին դուրս է հրավիրվում քվեարկության սենյակից:**

Եթե քաղաքացին իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է **ԿԱՐՄԻՐ** նշան, ընտրողի անունը, ազգանունը, լուսանկարը (էլեկտրոնային շտեմարանում դրա առկայության դեպքում), անձը հաստատող փաստաթղթի համարը, տեղամասի ընտրողների ցուցակում հերթական համարը և «**ԿՐԿՆԱԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՓՈՐՁ**» ծանուցումը, էկրանին հայտնվում է նաև այն փաստաթղթի համարը, որով անձն արդեն գրանցված է եղել տվյալ տեղամասում և գրանցման ամսաթիվն ու ժամը:





ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ

ԿՐԿՆԱԿԻ
ԳՐԱՆՑՄԱՆ
ՓՈՐՁ

20/01 05/04/2020 15:06:32

Ընտրողների ցուցակում հերթական համարը 323

Անուն ԱՆՈՒՇ

Ազգանուն ՍՈՒՐԵՆՅԱՆ

Փաստաթուղթ: AP0550041

Անձը արդեն գրանցված է եղել այս տեղամասում հետևյալ փաստաթղթի համարով:

AA321456

Գրանցման ժամը
05/04/2020 15:32

Ուշադրություն՝ կարմիր նշանի դեպքում տեխնիկական սարքավորման վրա միանում է ձայնային ազդանշան և տպվում է կրկնակի գրանցման փորձի կտրոն:

Մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների գրանցումը՝

- զորամասում հաշվառված քաղաքացիների ցուցակով քվեարկության դեպքում.
- քվեարկության օրը տեղամասում կազմվող լրացուցիչ ցուցակով քվեարկության դեպքում.

Զորամասում հաշվառված քաղաքացիների ցուցակով քվեարկության դեպքում

Քվեարկության օրը տեղամասում կազմվող՝ լրացուցիչ ցուցակով քվեարկության դեպքում

մինչև մասնագետին մոտենալը քաղաքացիների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամը՝

- ✔ **ստուգում է** քաղաքացու ինքնությունը.
- ✔ ցուցակում **գտնում է** քաղաքացու տվյալները,
- ✔ քվեարկության օրը տեղամասում կազմվող՝ լրացուցիչ ցուցակով քվեարկելու դեպքում **լրացնում է** քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը.
- ✔ **լրացնում է** անձը հաստատող փաստաթղթի համարը.
- ✔ **լրացնում է** լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքի համարը և ամսաթիվը.
- ✔ քաղաքացին **ստորագրում է** իր անվան դիմաց.
- ✔ հանձնաժողովի անդամը **դնում է** իր անհատական կնիքը ստորագրության դիմաց:

Մասնագետը տեխնիկական սարքավորման մեջ ներմուծում է, թե որ ցուցակի ընտրող է, ներմուծում է անձը հաստատող փաստաթուղթը, ապա ընտրողի համարը համապատասխան ցուցակում, որից հետո քաղաքացին ներմուծում է իր մատնահետքը:
Այդ գործողություններից հետո տեխնիկական սարքավորումը տպում է քվեարկության կտրոն, որը պարունակում է, թե որ ցուցակի ընտրող է, ընտրողի համարը համապատասխան ցուցակում և քվեարկության կտրոնի հերթական համարը և կտրոնը փոխանցում է քաղաքացուն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության օրը կազմված լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու համար **ՔԱՂԱՔԱՑԻՆ** անձը հատատող փաստաթղթի հետ **պետք է ներկայացնի նաև ստորև նշված տեղեկանքը:**

N_____

« ____» _____ 20 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿԱԶՄՎՈՂ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

_____

անունը, հայրանունը, ազգանունը

Անձը հաստատող փաստաթուղթ _____

սերիա, համար

հաշվառված _____

հաշվառման վայրը

դուրս է մնացել թիվ _____ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը՝

_____ -ին

անունը, հայրանունը, ազգանունը

ընդգրկել _____ թիվ _____ ընտրական տեղամասի

նշվում է համայնքի անվանումը՝ ՏԻՄ ընտրության դեպքում

ընտրողների լրացուցիչ ցուցակում:

Ներկայացվում է տեղամասային ընտրական հանձնաժողով:

_____

(լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման

(ստորագրություն)

ղեկավարի անունը, ազգանունը)

Կ.Տ.

«____» _____ 20 թվական

ՄԻԱՅՆ ՆՇՎԱԾ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ Է, ՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԵՏՔ Է ԳՐԱՆՑԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՈՒՄ:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պետք է նշված տեղեկանքը ցույց տա տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետին, որից հետո միայն վերջինս քվեարկության մասնակցին կգրանցի լրացուցիչ ցուցակով և կտա համապատասխան կտրոն:



Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների գրանցումը՝

- քրեակատարողական հիմնարկում քվեարկության դեպքում.
- շրջիկ արկղով քվեարկության դեպքում.
- տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու դեպքում:

Քրեակատարողական հիմնարկում

Շրջիկ արկղով քվեարկության դեպքում

Տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու դեպքում



հանձնաժողովի համապատասխան անդամը քաղաքացուն գրանցելուց հետո լրացնում է համարակալված կտրոն վրան նշելով՝

1. **որ ցուցակից է,**
2. **ցուցակում հերթական համարը,**
3. **անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը**
4. **կտրոնը փոխանցում է ընտրողին**

! Եթե քվեարկության մասնակիցը չի կարող ինքնուրույն ստորագրել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում, ապա նա իրավունք ունի դիմելու այլ քաղաքացու օգնության, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամների:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում տեղ գտած տառասխալը կամ թվային սխալը, մնացած տվյալների համապատասխանության դեպքում, հիմք չեն քաղաքացուն քվեարկելուց զրկելու համար:

2 *Քվեաթերթիկ և քվեարկության ծրար ստանալը*

Գրանցվելուց անմիջապես հետո քաղաքացին մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին և ներկայացնում քվեարկության կտրոնը:

Հանձնաժողովի անդամը քաղաքացուն տրամադրում է հանրաքվեի մեկ քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար:

3 *Քվեարկություն*

Քաղաքացին անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացին քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե քաղաքացին ինչպես է քվեարկում:

- ✓ քվեարկության մասնակիցը **V ձևի** նշում է կատարում «Այո» բառի դիմացի քառանկյունում, եթե համաձայն է ընդունել հանրաքվեի դրված հարցը.
- ✓ քվեարկության մասնակիցը **V ձևի** նշում է կատարում «Ոչ» բառի դիմացի քառանկյունում, եթե համաձայն չէ ընդունել հանրաքվեի դրված հարցը.
- ! **Քվեաթերթիկն առանց ծալելու դնում է քվեարկության ծրարի մեջ:**

- *Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քվեարկության մասնակիցն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, **որը չպետք է լինի հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ կամ այցելու**:*
- *Օգնողն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ քաղաքացու:*
- *Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է:*
- *Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քաղաքացուն օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում*
- *Եթե քաղաքացին կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:*
- *Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ քաղաքացուն հատկացվում է նոր քվեաթերթիկ: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկն անհապաղ մարվում է:*

4 *Քվեատուփի մոտ*

✓ **Քվեարկության մասնակիցը մոտենում է քվեատուփի մոտ ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին և նրան է հանձնում քվեարկության կտրոնը:**

Ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը

- ✓ ստուգում է կտրոնը, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել նաև քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը.
- ✓ առանց քվեարկության ծրարը քաղաքացուց վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասոսնձվող դրոշմանիշը.
- ✓ բացում է քվեատուփի ճեղքը և հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:

! ***Եթե քվեարկության մասնակիցը չի ներկայացնում քվեարկության կտրոն***, ապա ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որը քվեարկության մասնակցից վերցնում է քվեարկության ծրարը, անհապաղ մարում է՝ առանց ծրարի պարունակությունն ստուգելու:

- ➢ **Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացին իրավունք չունի տեղամասային կենտրոնում հայտարարելու, թե ինչպես է քվեարկել:**
- ➢ **Քվեարկելուց հետո քվեարկության մասնակիցն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից:**
- ➢ **Քվեարկության գաղտնիությունը խախտելը՝ քվեաթերթիկի լուսանկարմամբ կամ տեսաձայնագրմամբ հրապարակելու միջոցով առաջացնում է քրեական պատասխանատվություն:**

Քվեարկության ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝

- պահպանում է կարգ ու կանոնը տեղամասային կենտրոնում և ապահովում է քվեարկության գաղտնիությունը.
- կարգավորում է քվեարկության մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների հոսքը տեղամասային կենտրոն.
- վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը.
- ըստ անհրաժեշտության քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ է տրամադրում հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին.
- ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին հատկացնում է ինքնասոսնձվող դրոշմանիշեր, եթե քվեարկության ընթացքում ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերը սպառվել են.
  - նոր ինքնասոսնձվող դրոշմանիշերի հերթական խմբաքանակն է հանձնում ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամից քվեարկության կտրոնները ստանալուց հետո.
  - հաշվում է ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամից ստացած քվեարկության կտրոնները, և թիվը արձանագրում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:
- ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամի հերթափոխի ավարտին հաշվում է չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը և քվեարկության մասնակիցներից ստացած քվեարկության կտրոնները, և թվերն արձանագրում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում
  - չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի հաշվարկված թիվն արձանագրում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում և հանձնում հաջորդ հերթափոխի ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին,
- քվեարկության ավարտին ստանում և հաշվում է չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը և քվեարկության մասնակիցներից ստացած քվեարկության կտրոնները, և թվերն արձանագրում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քաղաքացիների, ռազմաբժշկական հաստատությունում ստացիոնար բուժման մեջ գտնվող զինծառայող քաղաքացիների և ձերբակալված անձանց պահելու վայրերում ձերբակալված քաղաքացիների քվեարկությունը կազմակերպվում է համապատասխանաբար ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում, ռազմաբժշկական հաստատությունում և ձերբակալված անձանց պահելու վայրում՝ **շրջիկ արկղի միջոցով՝ քվեարկության օրը ԺԱՄԸ 8:00-ԻՑ ՀԵՏՈ՝ այն հաշվարկով, որ քվեարկությունն ավարտվի ՄԻՆՉԵՎ ԺԱՄԸ 18.00-Ն**:

Շրջիկ արկղի միջոցով քվեարկության կազմակերպման ժամանակը որոշում և հայտարարում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ հիմք ընդունելով շրջիկ արկղի միջոցով քվեարկող լրացուցիչ ցուցակում ընդգրկված քաղաքացիների թիվը, ինչպես նաև տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

Շրջիկ արկղի միջոցով քվեարկությունը կազմակերպում է տեղամասային ընտրական հանձնաժողովի այն անդամը, որին վիճակահանությամբ, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հայտարարած ժամի համար բաժին է ընկել «շրջիկ արկղ» կամ «քվեաթերթիկ և շրջիկ արկղ» բառերը պարունակող թերթիկը:

Եթե տեղամասն ընդգրկում է մի քանի ստացիոնար բժշկական կամ ռազմաբժշկական հաստատություններ կամ միաժամանակ բժշկական հաստատություն և ձերբակալված անձանց պահելու վայր, ապա շրջիկ արկղի միջոցով քվեարկությունը կարող են կազմակերպել տեղամասային ընտրական հանձնաժողովի տարբեր անդամներ, որոնց վիճակահանությամբ բաժին է ընկել համապատասխանաբար «շրջիկ արկղ» կամ «քվեաթերթիկ և շրջիկ արկղ» բառերը պարունակող թերթիկը՝ կախված այդ գործառույթն իրականացնելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հայտարարած ժամանակից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը շրջիկ արկղի միջոցով քվեարկությունն անցկացնող հանձնաժողովի անդամին տրամադրում է.

- շրջիկ արկղի միջոցով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների լրացուցիչ ցուցակը,
- ցուցակում ընդգրկված քաղաքացիների թվից մինչև 5 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան այդ ցուցակի թվից 10 քվեաթերթիկ ավելին և նույնքան քվեարկության ծրարներ,
- ցուցակում ընդգրկված քաղաքացիների թվին համապատասխան քանակով ինքնասոսնձվող դրոշմանիշեր և նույնքան համարակալված կտրոններ,
- փակված և կնքված շրջիկ արկղ և չօգտագործված քվեաթերթիկների համար փաթեթ:

Հատկացված փաստաթղթերի և դրանց քանակի մասին համապատասխան գրառումներ են կատարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Հանձնաժողովի անդամին, անհրաժեշտության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով, կարող է ուղեկցել ոստիկանության ծառայողը:

Շրջիկ արկղով քվեարկության կազմակերպման դեպքում գրանցումն իրականացվում է առանց տեխնիկական սարքավորման կիրառման:

Շրջիկ արկղի միջոցով քվեարկությունը կազմակերպելու նպատակով.

- ✓ հանձնաժողովի անդամն ստուգում է քվեարկության մասնակցի ինքնությունը, համապատասխան ցուցակում գտնում է նրա տվյալները,
- ✓ լրացնում քվեարկության մասնակցի անձը հաստատող փաստաթղթի համարը,
- ✓ քվեարկության մասնակիցն ստորագրում է իր անվան դիմաց,
- ✓ հանձնաժողովի անդամը դնում է իր անհատական կնիքը ստորագրության դիմաց,
- ✓ հանձնաժողովի անդամը լրացնում է համարակալված կտրոնը՝ կտրոնի վրա «թե որ ցուցակի ընտրող է» տողում նշում է **«ՇԱ»**, նշում է ցուցակում քվեարկության մասնակցի հերթական համարը, անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և հանձնում քվեարկության մասնակցին,
- ✓ քվեարկության մասնակցին է տրամադրում մեկ քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար:

Քվեարկության մասնակիցը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի: Հանձնաժողովի անդամը քվեարկողի համար ստեղծում է այնպիսի պայմաններ, որ հնարավոր լինի ապահովել քվեարկության գաղտնիությունը:

Հանձնաժողովի անդամը քվեարկության մասնակցից ստանում է համարակալված կտրոնը, որից հետո քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասոսնձվող դրոշմանիշը, բացում է շրջիկ արկղի ճեղքը և հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու շրջիկ արկղի մեջ:

Քվեարկության ավարտից հետո հանձնաժողովի անդամը փակում՝ հատուկ կապիչով կապում է շրջիկ արկղի ճեղքը և անհապաղ վերադառնում տեղամաս:

Հանձնաժողովի անդամը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին է հանձնում.

- ▪ հատուկ կապիչով փակված շրջիկ արկղը,
- ▪ շրջիկ արկղի միջոցով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների լրացուցիչ ցուցակը,
- ▪ քաղաքացիներից ստացված համարակալված քվեարկության կտրոնները,
- ▪ չօգտագործված համարակալված կտրոնները,
- ▪ չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը,
- ▪ չօգտագործված քվեարկության ծրարները, չօգտագործված, քաղաքացու կողմից ոչ ճիշտ լրացված կամ վնասված և հետ տրված քվեաթերթիկների փաթեթը:

Հանձնաժողովի անդամի կողմից վերադարձված փաստաթղթերի և դրանց քանակի մասին համապատասխան գրառումներ են կատարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Շրջիկ արկղը տեղադրվում է քվեարկության սենյակում բոլորի համար տեսանելի տեղում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի քարտուղարը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ ՄԻՆՉԵՎ ԺԱՄԸ 20:00-Ն**, քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ բացում է շրջիկ արկղը, հանում է քվեարկության ծրարները և գցում քվեատուփի մեջ:

Շրջիկ արկղի միջոցով քվեարկության կազմակերպմանը կարող են ներկա գտնվել նաև վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Քրեակատարողական հիմնարկի պետը քվեարկության օրվանից 2 օր առաջ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը հանձնում է քրեակատարողական հիմնարկում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

Յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկի համար քվեարկության սկիզբը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Քրեակատարողական հիմնարկում քվեարկությունն անցկացվում է ժամը 9.00-ից հետո՝ կախված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվից, սակայն այն հաշվարկով, որ քվեարկությունն ավարտված լինի ժամը 20.00-ին:

Քրեակատարողական հիմնարկում քվեարկությունը կազմակերպելու նպատակով նպատակով.

- ✓ հանձնաժողովի անդամն ստուգում է քվեարկության մասնակցի ինքնությունը, ցուցակում գտնում է նրա տվյալները,
- ✓ քվեարկության մասնակիցն ստորագրում է իր անվան դիմաց,
- ✓ հանձնաժողովի անդամը դնում է իր անհատական կնիքը ստորագրության դիմաց,
- ✓ հանձնաժողովի անդամը լրացնում է համարակալված կտրոնը՝ կտրոնի վրա «թե որ ցուցակի ընտրող է» տողում նշում է **«ՔԿՀ»**, նշում է ցուցակում քվեարկության մասնակցի հերթական համարը, անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և հանձնում քվեարկության մասնակցին,
- ✓ քվեարկության մասնակցին է տրամադրում մեկ քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար:

Քրեակատարողական հիմնարկում տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփումն սկսում է **ԺԱՄԸ 20.00-ԻՆ՝** անկախ քվեարկության մասնակիցների թվից:

Քրեակատարողական հիմնարկներում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովներին տեխնիկական սարքավորումներ չեն տրամադրվում և քվեարկության մասնակիցների գրանցումն իրականացվում է առանց տեխնիկական սարքավորման կիրառման:

ՀԱԿԻՐՃ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- ✓ Եթե տեղամասում և քվեարկության սենյակում հերթ է, ցանկալի է հրավիրել հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին ներս և ապահովել, որ նրանք քվեարկությանը մասնակցեն առանց հերթի:
- ✓ Միշտ խոսեք քվեարկության մասնակցի հետ, և ոչ թե նրա օգնականի կամ թարգմանչի հետ: Քվեարկության մասնակցին կարող է ուղեկցել նրա օգնականը կամ ժեստերի լեզվի թարգմանիչը: Եթե այդպես է, խնդրում ենք շարունակել նայել քաղաքացուն, երբ դուք խոսում եք նրա հետ:
- ✓ Մի մտածեք, որ հաշմանդամություն ունեցող քաղաքացիները միշտ օգնության կարիք ունեն: Մինչ օգնություն առաջարկելը նախ հարցրեք նրանցից:

Մի քանի առաջարկություններ տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող քաղաքացիների վերաբերյալ:

Տեսողական հաշմանդամություն *Տեսողական հաշմանդամություն ունեցող անձը կարող է դժվարանալ տեսնել, նույնիսկ երբ կրում է ակնոցներ, կամ կարող է լինել կույր կամ թույլ տեսնող:*	• Ներկայացեք, երբ նրանք մտնում են սենյակ: • Տեղեկացրեք, որ հանձնաժողովում խոշորացույցեր կան: • Եթե քվեարկության մասնակիցը խնդրում է, որ իրեն ուղեկցեք քվեարկության խցիկի կամ քվեատուփի մոտ, նրան թույլ տվեք բռնել Ձեր ձեռքը: • Երբ քվեարկության մասնակցին օգնում եք նստել, նրանց ձեռքը տարեք դեպի աթոռի թիկնակը, որպեսզի նրանց օգնեք ինքնուրույն գտնել իրենց տեղը: • Ուղղությունները բացատրելիս եղեք ճշգրիտ և կոնկրետ, խուսափեք «այս, այդ, այն կողմում, այս կողմում» տերմիններից:
Լսողության խնդիր ունեցողներ *Լսողության խնդիր ունեցող անձը կարող է դժվարանալ լսել, նույնիսկ եթե օգտագործում է լսողական սարք:*	• Խոսելու ընթացքում նայեք նրանց դեմքին: • Խոսեք դանդաղ և հստակ: • Եղեք համբերատար ու բարյացակամ և կրկնեք ցուցումները: • Անհրաժեշտության դեպքում թեթև ձեռքով արեք՝ նրա ուշադրությունը գրավելու համար:

Ֆիզիկական հաշմանդամություն *Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձը կարող է քայլելու կամ աստիճաններ բարձրանալու դժվարություն ունենալ և նա կարող է անվասայլակ կամ այլ աջակցող սարք օգտագործել:*	• Անհրաժեշտության դեպքում օգնեք բացել դուռը: • Անվասայլակ օգտագործող անձի հետ խոսելիս նստեք աթոռի վրա, որպեսզի Ձեր աչքերը միևնույն հարթության վրա լինեն: • Խուսափեք անվասայլակին ձեռք տալուց, մինչև Ձեզ թույլտվություն չտան:
Հոգեբանասոցիալական հաշմանդամություն *Հոգեբանասոցիալական հաշմանդամություն ունեցող անձը կարող է այնպիսի խնդիր ունենա, որն ազդում է նրա մտածողության, զգացմունքների և/կամ վարքի վրա:*	• Եղեք համբերատար ու բարյացակամ և կրկնեք ցուցումները: • Հարգեք նրանց անձնական տարածքը: • Հնարավորության դեպքում նրանց առաջարկեք ավելի հանգիստ վայր սպասելու համար:
Մտավոր հաշմանդամություն *Մտավոր հաշմանդամություն ունեցող անձը կարող է ունենալ սովորելու և առօրյա կյանքում կենսագործունեություն ծավալելու սահմանափակ կարողություն:*	• Խոսելու ընթացքում նայեք նրանց դեմքին: • Խոսեք դանդաղ և հստակ: • Քվեարկության կարգը բացատրելիս՝ օգտագործեք պարզ բառեր և արտահայտություններ: • Անհրաժեշտության դեպքում ցուցումները գրեք կամ նկարեք:
Հիշեք: Հաշմանդամության ոչ բոլոր տեսակներն են տեսանելի մյուսներին: Իմացեք, որ որոշ քաղաքացիներ ունեն հաշմանդամություն, որը դուք չեք կարող տեսնել, բայց նրանք, այնուամենայնիվ, ունեն աջակցության կարիք:	

- ✓ Դուռը բաց պահեք, որպեսզի անվասայլակ, հենակներ կամ ձեռնափայտեր օգտագործող անձինք կարողանան հեշտությամբ մտնել սենյակ:
- ✓ Չպետք է լինեն պատերից կամ առաստաղից ցածր կախված առարկաներ, որոնց կարող են պատահաբար բախվել տեսողության խնդիրներ ունեցող անձինք:
- ✓ Պետք է լինի բավականաչափ տարածք, որպեսզի անվասայլակ օգտագործող անձինք կարողանան տեղաշարժվել գրանցման սեղանից դեպի քվեախցիկ և այնուհետև քվեատուփի մոտ:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄԸ

Քվեարկության օրը՝ ԺԱՄԸ 20:00 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և.

- ✓ արգելում է քաղաքացիների մուտքը քվեարկության սենյակ,
- ✓ քվեարկության սենյակում գտնվող քաղաքացիներին քվեարկելու հնարավորություն է տալիս,
- ✓ փակում է քվեատուփի ճեղքը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ՄԻՆՉԵՎ ԺԱՄԸ 20.30-Ը տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդում է մինչև ժամը 20.00-ն տվյալ տեղամասում քվեարկությանը մասնակիցների թիվը.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության կազմումը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է հենց քվեարկության սենյակում այնպես, որ ամփոփման գործընթացը լինի քվեարկության սենյակում տեղադրված անշարժ տեսախցիկի տեսադաշտում:

Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում անհրաժեշտ է խստորեն պահպանել Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված գործողությունների հաջորդականությունը:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ՝

1. **փաթեթավորում է** հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում.
2. հանրաքվեի տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների հիմնական ցուցակում քաղաքացիների ստորագրությունների հիման վրա **հաշվում է** քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը.
3. Առկայության դեպքում առանձին **հաշվում է** նաև՝

I. քվեարկության օրը տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում ընգրկված **քաղաքացիների ընդհանուր թիվը** և **առկա ստորագրությունների թիվը**.

II. շրջիկ արկղի միջոցով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների լրացուցիչ ցուցակներում ընգրկված **քաղաքացիների ընդհանուր թիվը** և **առկա ստորագրությունների ընդհանուր թիվը.**

4. այդ թվերը **հրապարակում և արձանագրում է** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում.

   I. **Հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում արձանագրված քվեարկության մասնակիցների թիվը հայտնում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:**

5. Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա քվեարկությունն ավարտվելուց հետո **տեխնիկական սարքավորման միջոցով տպում է** տեղեկանք, որում նշվում են տարածքային ընտրական հանձնաժողովի և տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան տեղամասի ընտրողների ցուցակում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ

05/04/2020

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ
քվեարկության ընթացքում տեխնիկական
սարքով գրանցված ընտրողների

Ընտրական տեղամաս: 20/02

Տեխնիկական սարքով գրանցված ընտրողների ընդհանուր թիվը	1450

Այդ թվում՝

Ընտրողների ցուցակից	1250
Տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակից	10
Զորամասում հաշվառված ընտրողների ցուցակից	190

Ընտրողների ցուցակից գրանցվածների հերթական համարները

1,2,9,65,87*,98*

* - Ընտրողներ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները տեխնիկական սարքավորման մեջ ստեղնաշարով ներմուծելու միջոցով:

Տեղեկանքը տպվել է 03/04/2017 15:06:32

Սարք VAD1

Հանձնաժողովի նախագահ

_____
ստորագրություն

Կ.Տ.

6. Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում այդ մասին համապատասխան **գրառում է կատարում** գրանցամատյանում:

7. **Տեղեկանքի մեկ օրինակը, ստորագրվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից, կնքվում հանձնաժողովի կնիքով և տեղադրվում է պարկում:**

8. Տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, ըստ պահանջի **տրամադրում է** ամփոփման նիստին ներկա գտնվող դիտորդներին և վստահված անանց:

9. **փաթեթավորում է** հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները առանձին մեկանգամյա օգտագործման փաթեթում, փաթեթը կնքում է, այն ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը.

10. **առանձին փաթեթավորում է զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակները, փաթեթը կնքում է և ՏԵՂԱԴՐՈՒՄ ՄԵԾ ՊԱՐԿՈՒՄ.**

11. **հաշվում է** քվեարկության մասնակիցներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների թիվը, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում.

12. **հաշվում է** քվեարկության մասնակիցներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների թիվը. փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում
13. **արձանագրում է** քվեարկության մասնակիցներից ստացված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը (որը հավասար է սարքավորման միջոցով տպված և համարակալված կտրոնների թվերի գումարին).
14. **հաշվում է** չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում.
15. **հաշվում է** չօգտագործված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում: **Համարակալված քվեարկության կտրոնները չօգտագործվելու դեպքում դրանք չի հաշվում, և նշում է տարածքային ընտրական հանձնաժողովի հատկացրած կտրոնների թիվը.**
16. **առանց հաշվելու փաթեթավորում է** չօգտագործված քվեաթերթիկները

Այդ գործողությունների արդյունքները հրապարակվում են և արձանագրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

- ⇨ Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը.
- ⇨ քվեատուփից հանում քվեարկության մեկ ծրար.
- ⇨ ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար.
- ⇨ քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը.

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

✓ Քվեարկության ծրարի մեջ մեկից ավելի քվեաթերթիկներ գտնվելու դեպքում հաշվարկում ընդգրկվում է **միայն սահմանված նմուշի քվեաթերթիկը,** այսինքն՝ հաստատված նմուշի քվեաթերթիկը, **որի վրա փակցված է այդ ընտրական տեղամասի ինքնասոսնձվող դրոշմանիշը:**

✓ **Ավելորդ գրառում պարունակող քվեարկության ծրարի դեպքում քվեաթերթիկը ծրարից չի հանվում**, քվեարկության ծրարը դրանում գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարվում է:

(ԸՕ 68-րդ հոդված, մաս 6)

Քվեաթերթիկների տեսակավորման ժամանակ հանձնաժողովի նախագահը հայտարարում է.

- սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին,
- սահմանված քվեաթերթիկի դեպքում՝ վավեր կամ անվավեր լինելու մասին:

Հանրաքվեի քվեարկության դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն **ԱՆՎԱՎԵՐ Է**, եթե

- ! միաժամանակ «ԱՅՈ» և «ՈՉ» բառերի դիմաց նշումներ է ներառում.
- ! որևէ նշում չի ներառում.
- ! բացի քվեարկության համար սահմանած V կամ դրան նմանվող նշանից, ներառում է այլ՝ քվեարկողի ինքնությունը բացահայտող նշում.
- ! ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը:

- վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է ինչպես է քվեարկված («Այո», «Ոչ»)
- **քվեաթերթիկը ցուցադրվում է** այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար,
- պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին,
- հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն (առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը),
- առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի

նախագահի հայտարարության համաձայն, քվեաթերթիկը դրվում է համապատասխան քվեաթերթիկների փաթեթի մեջ:

Այս գործողությունը կրկնում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:

Քվեաթերթիկները տեսակավորելուց հետո՝ մեկ առ մեկ հաշվարկվում են՝

- ✓ «ԱՅՈ» քվեարկված քվեաթերթիկները,
- ✓ «ՈՉ» քվեարկված քվեաթերթիկները,
- ✓ անվավեր քվեաթերթիկները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ! Քվեաթերթիկների տեսակավորումն իրականացնելու ժամանակ հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ կամ նշումներ կատարելու այլ առարկաներ:
- ! Արդյունքներն ամփոփելիս չսահմանված նմուշի քվեաթերթիկները հաշվի չեն առնվում և չեն հաշվարկվում:
- ! Հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները սահմանված կարգով փաթեթավորվում են, իսկ փաթեթները կնքվում և տեղադրվում են պարկում:
- ! Փաստաթղթերի պարկում տեղադրվող փաթեթների վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը և հանձնաժողովի կնիքը:
- ! Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու փաթեթների վրա:
- ! Հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում պետք է փակվի:
- ! Տեղամասային ընտրական հանձնաժողովում այդ պարկը սահմանված կարգով փակելու համար պատասխանատու է հանձնաժողովի նախագահը
- ! Պարկի վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը:
- ! Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու պարկի վրա:
- ! Գրանցամատյանում գրառվում են փաթեթների և պարկի վրա ստորագրողների անունը, ազգանունը, դրվում ստորագրության նմուշները:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի ոչ ուշ քան քվեարկության ավարտից 12 ժամ հետո:

Արձանագրությունը կազմվում է 4 օրինակից.

1 օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների կողքին.

1 օրինակը տեղադրվում է հանրաքվեի փաստաթղթերի պարկում.

2 օրինակը ներկայացվում են տարածքային ընտրական հանձնաժողով.

Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները, կնքում է հանձնաժողովի նախագահը:

Հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել արձանագրությունը: Եթե նա արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հատուկ կարծիք), ապա այդ մասին գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հատուկ տեղում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք:

Քվեարկության ավարտից հետո ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 14 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում.

- ❒ հանրաքվեի փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը.
- ❒ քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակների պարկը,
- ❒ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը.
- ❒ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը.
- ❒ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը.
- ❒ տեխնիկական սարքավորումը.
- ❒ չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը.
- ❒ չօգտագործված քվեաթերթիկները, քվեատուփից հանված քվեարկության ծրարները,
- ❒ քվեատուփը (շրջիկ արկղը).
- ❒ քվեարկության խցիկները:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ⇨ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը,
- ⇨ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը,
- ⇨ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը,
- ⇨ չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը,
- ⇨ չօգտագործված քվեաթերթիկները,

տարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխվում առանց մեկանգամյա օգտագործման պարկում տեղադրելու:

Հանրաքվեի փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը տարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ:

Հանրաքվեի փաստաթղթերն տարածքային ընտրական հանձնաժողովում հանձնվում և ընդունվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:

Դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, վստահված անձինք, այցելուները քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո կարող են իրենց միջոցներով ուղեկցել հանրաքվեի փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից տարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ) ԲՈՂՈՔԱՐԿԵԼԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել՝

- յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված հանրաքվեին մասնակցելու սուբյեկտիվ իրավունքը.
- վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը.
- դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը.
- զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը.
- քարոզչության կողմի լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կողմի՝ «Հանրաքվեի մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները, ներկայացվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝

- **2 օրվա ընթացքում այն օրվանից**, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին: Բողոքները **ներկայացվում են՝**
  - **աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն.**
  - **քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն**
- **Քվեարկության օրվա ընթացքում կամ քվեարկության հաջորդ օրը** տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները **ներկայացվում են՝**
  - **քվեարկության օրը ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն.**
  - **քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն.**
  - **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:**

Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին՝ **իրավունք ունի ներկայացնելու.**

- ✓ **տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում:**

Դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝

- **քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն**
- **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:**

- ✓ **տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում:** Վերահաշվարկի դիմումը պետք է ներառի դիմողի անունը, ազգանունը, դիմողի հասցեն և այն տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ: Դիմումին կարող են կցվել քվեարկության արդյունքների սխալ ամփոփման ապացույցներ: Վերահաշվարկի դիմումը պետք է ստորագրված լինի դիմումատուի կողմից:

Վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝

- **քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն,**
- **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:**

Տարածքային ընտրական հանձնաժողովը մերժում է տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմումը և վերահաշվարկ չի իրականացնում, եթե պահանջվել է քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացում Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի դրույթների խախտումով:

Ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումը պետք է.

- ստորագրված լինի դիմողի կողմից,
- ներառի դիմողի անունը, ազգանունը,
- դիմողի հասցեն,
- տրման ամսաթիվը,
- կարող է ներառել նաև դիմողի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն,
- դիմումում պետք է սահմանված լինի դիմողի պահանջը,
- բերված լինեն դիմողի հիմնավորումները,
- հնարավոր ապացույցները պետք է կցված լինեն դիմումին:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Ընտրական հանձնաժողովի անդամի կողմից ներկայացված դիմումին կից պետք է ներկայացվի հանձնաժողովի անդամի սահմանված նմուշի վկայականի պատճենը:

Դիմողը դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը: Եթե դիմում տալու համար նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:

Ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումները կամ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը:

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Սահմանված կանոնները վերաբերում են նաև հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ (ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ)

Օրինակելի ձև

«Թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողով
Որոշում _____ -Ա
նշվում է հերթական համարը

«_____» _____ 2020թ.

Քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը սահմանելու մասին»

Թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ քվեարկության սենյակում ժամը _____-ի դրությամբ գտնվում են թվով ___ տեղական դիտորդ, թվով ___ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, այսինքն՝ քվեարկության սենյակում միաժամանակ ներկա են գտնվում _____ տեղական դիտորդ և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, որն ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը:

Հիմք ընդունելով «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի և Ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները՝ թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովը **որոշեց**

1. Սահմանել թիվ ___ / ____ տեղամասային կենտրոնի քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը՝ _____:
2. Արգելել նոր դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մուտքը քվեարկության սենյակ և նոր դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մուտքը թույլատրել քվեարկության սենյակ միայն համապատասխանաբար ներկա դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների դուրս գալուց հետո:

Հանձնաժողովի նախագահ	_____ **նշվում է «կողմ եմ» բառերը, եթե կողմ է որոշմանը**	_____ **նշվում է «դեմ եմ» բառերը, եթե դեմ է որոշմանը**	_____ **անունը, ազգանունը**	_____ **ստորագրությունը**
Հանձնաժողովի քարտուղար				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				

Հանձնաժողովի որոշումն ընդունվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

Հանձնաժողովի նախագահ _____
ստորագրություն

Կ.Տ.

Օրինակելի ձև

«Թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողով
Որոշում _____ -Ա

նշվում է հերթական համարը

«_____» _____ 2020թ.

Դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, վստահված անձին նախազգուշացնելու մասին»

Թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ _____
_____ -ը

նշվում է վստահված անձի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի անունը, ազգանունը

խոչընդոտել է հանձնաժողովի բնականոն աշխատանքը, նիստի բնականոն ընթացքը, խախտել տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգը, անհարգալից վերաբերմունք է դրսևորել տեղամասային ընտրական հանձնաժողովի նկատմամբ:

Հիմք ընդունելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. հունիսի 17-ի N 35-Ն որոշման 3-րդ հավելվածի 33-րդ կետը՝ թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովը որոշեց

_____ -ի

նշվում է վստահված անձի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի անունը, ազգանունը

նկատմամբ կիրառել նախազգուշացում:

Հանձնաժողովի նախագահ	_____ նշվում է «կողմ եմ» բառերը, եթե կողմ է որոշմանը	_____ նշվում է «դեմ եմ» բառերը, եթե դեմ է որոշմանը	_____ անունը, ազգանունը	_____ ստորագրությունը
Հանձնաժողովի քարտուղար				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				

Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին:

Հանձնաժողովի նախագահ _____

ստորագրություն

Կ.Տ.

Ծանոթագա:_____

նշվում է այն անձի անունը, ազգանունը, ում նկատմամբ կիրառվել է նախազգուշացումը ստորագրություն

Օրինակելի ձև

«Թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողով
Որոշում _____ -Ա

նշվում է հերթական համարը

«_____» _____ 2020թ.

Դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին հանձնաժողովի նիստից և տեղամասային կենտրոնից հեռացնելու մասին»

Թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ _____
_____ -ի

նշվում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի անունը, ազգանունը

նկատմամբ կիրառել նախազգուշացում:

Նախազգուշացումից հետո, _____ -ը

նշվում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի անունը, ազգանունը

խախտում է «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի և Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը, քվեարկության բնականոն ընթացքը՝ _____
_____:

նկարագրվում է խախտում հանդիսացող արարքը,

Հիմք ընդունելով «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի և Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի պահանջները՝ թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովը որոշեց _____ -ին

նշվում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի անունը, ազգանունը

հեռացնել _____

նշել Հանձնաժողովի նիստից՝ նշելով օրը և ժամը, կամ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակից և տեղամասային կենտրոնից՝ նշելով տեղամասի համարը

_____:

Հանձնաժողովի նախագահ	_____ նշվում է «կողմ եմ» բառերը, եթե կողմ է որոշմանը	_____ նշվում է «դեմ եմ» բառերը, եթե դեմ է որոշմանը	_____ անունը, ազգանունը	_____ ստորագրությունը
Հանձնաժողովի քարտուղար				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				

Հանձնաժողովի որոշումն ընդունվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

Հանձնաժողովի նախագահ _____

ստորագրություն

Կ.Տ.

Ծանոթագա:_____

նշվում է այն անձի անունը, ազգանունը, ում նկատմամբ կիրառվել է նախազգուշացումը ստորագրություն

Օրինակելի ձև

«Թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողով

Որոշում _____ -Ա

նշվում է հերթական համարը

«_____» _____ 2020թ.

Վստահված անձին հանձնաժողովի նիստից և տեղամասային կենտրոնից հեռացնելու մասին»

Թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ _____ _____ -ի

նշվում է վստահված անձի անունը, ազգանունը

նկատմամբ կիրառել նախազգուշացում:

Նախազգուշացումից հետո, _____ -ը

նշվում է վստահված անձի անունը, ազգանունը

խախտում է «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի և Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը, քվեարկության բնականոն ընթացքը՝ _____

_____

_____:

նկարագրվում է խախտում հանդիսացող արարքը,

Հիմք ընդունելով «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի և Ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջները՝ թիվ ___ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովը որոշեց _____ -ին

նշվում է վստահված անձի անունը, ազգանունը

հեռացնել _____

նշել Հանձնաժողովի նիստից՝ նշելով օրը և ժամը, կամ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակից և տեղամասային կենտրոնից՝ նշելով տեղամասի համարը

_____:

Հանձնաժողովի նախագահ	_____ նշվում է «կողմ եմ» բառերը, եթե կողմ է որոշմանը	_____ նշվում է «դեմ եմ» բառերը, եթե դեմ է որոշմանը	_____ անունը, ազգանունը	_____ ստորագրությունը
Հանձնաժողովի քարտուղար				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				
Հանձնաժողովի անդամ՝				

Հանձնաժողովի որոշումն ընդունվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

Հանձնաժողովի նախագահ _____

ստորագրություն

Կ.Տ.

Ծանոթագա:_____

նշվում է այն անձի անունը, ազգանունը, ում նկատմամբ կիրառվել է նախազգուշացումը ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԵԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ ունեցող տեղամասերի համար նախատեսված պարագաներ.

	ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ	ՆՊԱՏԱԿ	ՆԿԱՐ
1	Ճամպրուկ	1	Տեխնիկական սարքավորումն ապահով պահելու և տեղափոխելու համար:	
2	Տեխնիկական սարքավորում	1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում	Քվեարկության ընթացքում քաղաքացիներին գրանցելու համար (դրված է ճամպ-րուկում):	
3	Թղթի գլան	4 հատ յուրաքանչյուր ճամպրուկում	Քվեարկության կտրոններ և տեղեկանքներ տպելու համար (դրված է ճամպրուկում):	
4	Տեխնիկական սարքավորման հոսանքի լար	1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում	Սարքավորումը հոսանքին միացնելու համար (դրված է ճամպրուկում):	
5	Հոսանքի տատանումներից պաշտպանող սարք	1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում	Սարքավորումը հոսանքի տատանումներից պաշտպանելու համար (դրված է ճամպրուկում):	
6	Ստիլուս-գրիչ	1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում	Սարքավորման էկրանին հեշտությամբ աշխատելու համար (դրված է ճամպրուկում):	
7	Կտոր	1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում	Մատնահետքերի ընթերցման սկաները և սարքավորման էկրանը մաքրելու համար (դրված է ճամպրուկում):	
8	Հոսանքի երկարացման լար	առնվազն 2 հատ յուրաքանչյուր տեղամասի համար	Անհրաժեշտության դեպքում հոսանքի վարդակներին հասնելու համար:	

9	Մասնագետի կոդը պարունակող ծրար	1 հատ յուրաքանչյուր տեղամասի համար	Պարունակում է մասնագետի վեցանիշ կոդը:	
10	Մասնագետի գործառույթների հուշաթերթ	1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում	Մասնագետի հիմնական գործառույթներ վերաբերյալ (դրված է ճամպրուկում):	

ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ ունեցող տեղամասերին կտրամադրվեն **2 կամ 3 սարքավորումներ**՝ պայմանավորված տեղամասի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվով և լրացուցիչ պարագաներ, որոնք թվարկվում են ստորև բերված աղյուսակում.

	ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ	ՆՊԱՏԱԿ	ՆԿԱՐ
1	Ռաուտեր	1 հատ յուրաքանչյուր տեղամասի համար	Տեխնիկական սարքավորումների միջև ներքին ցանց ստեղծելու համար:	
2	Ցանցային լար	Ըստ տեղամասում առկա տեխնիկա-կան սարքավորում-ների թվի	Տեխնիկական սարքավորումները ռաուտերին միացնելու համար:	
3	Ռաուտերի հոսանքի լար	1 հատ յուրաքանչյուր տեղամասի համար	Ռաուտերը հոսանքին միացնելու համար (դրված է տուփում):	
4	Անխափան սնուցման սարք (UPS)	1 հատ յուրաքանչյուր տեղամասի համար	Էլեկտրաէներգիայի անջատման դեպքում ռաուտերի սնուցումն ապահովելու համար:	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ
(149-154.9 հոդվածներ)

Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին

Հոդված 149. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքները, որոնք՝

1) կատարվել են գույքին վնաս պատճառելով կամ պատճառելու սպառնալիքով,

2) կատարվել են նյութապես շահագրգռելով,

3) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,

5) կատարվել են մի խումբ անձանց կողմից՝

6) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 149.1. Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը

1. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը՝

1) կատարվել է ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով,

2) կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) զուգորդվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

4) կատարվել է մի խումբ անձանց կողմից,

5) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

Հոդված 150. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը

1. Հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը, ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված նմուշի դարձնելը, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

Հոդված 153. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը

1. Կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 154. Քվեարկության գաղտնիությունը խախտելը

1. Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Քվեարկողի կողմից բաց՝ երրորդ անձանց (բացառությամբ քվեարկողին օգնող անձի) համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելը, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության հրապարակման միջոցով խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

Հոդված 154.1. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելը կամ իրացնելը

1. Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելը կամ այլ եղանակով իրացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 154.2. Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը

1. Թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու կամ ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու կամ մեկից ավելի անգամ քվեարկելու կամ այլ անձի փոխարեն քվեարկելու պայմանով թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար կաշառք ստանալը, այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու կամ ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու կամ մեկից ավելի անգամ քվեարկելու կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրողի կամ այլ անձի համար կաշառք տալը, այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ տրամադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

3. Ընտրողին թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ քվեարկելուն կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն հարկադրելը, որը կատարվել է գույքին վնաս պատճառելով կամ գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով, բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից.

2) երկու կամ ավելի անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

5. Ընտրությունների կամ հանրաքվեի նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփումը (իսկ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ Ազգային ժողով ընտրվելու մասին որոշումը) թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ (բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշերը կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և նվազագույն աշխատավարձի եռապատիկը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութերի կամ առարկաների) տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը) կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

6. Կաշառք ստացող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ անձը մինչև կաշառք ստանալու մասին իրավապահ մարմիններին հայտնի դառնալը, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Հոդված 154.4. Զենքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը

Քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն մուտք գործելն առանց ծառայողական անհրաժեշտության՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

Հոդված 154.5. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

Հոդված 154.6. Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 154.7. Քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնասոսնձվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից

տեղադրված տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտրական փաստաթղթերի փաթեթը հափշտակելը

1. Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնասոնձվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության տեղադրած տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտրական փաստաթղթերի փաթեթը հափշտակելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Նույն արարքը, որը կատարվել է ընտրական հանձնաժողովի անդամի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

Հոդված 154.8. Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելը

1. Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիտավորությամբ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն (ոչ հայտարարատուի կողմից կամ մտացածին անձի անունից ստորագրված հայտարարություն) դիմումին կից ներկայացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 154.9. Ընտրակաշառքի միջնորդությունը

1. Ընտրակաշառքի միջնորդությունը՝ ընտրակաշառք տվողի և ընտրակաշառք ստացողի միջև ընտրակաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքը կամ պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

(40.1- 40.15 հոդվածներ)

Ընդունված է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին

Հոդված 40.1. Քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը քարոզչություն կատարելը

Քվեարկության և դրան նախորդող օրը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով քարոզչություն կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

Քվեարկության և դրան նախորդող օրը տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով քարոզչություն կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնող անձի կամ ղեկավարի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

Հոդված 40.2. Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը

Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Հոդված 40.4. Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը

Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Հոդված 40.6. Ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելը

Ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Հոդված 40.8. Քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը, քարոզչական նյութեր տարածելը, նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները օգտագործելը

1. Քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից

նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, և պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:

2. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական և մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, և պաշտոնատար անձանց նկատմամբ՝ չորսհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:

Հոդված 40.13. Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Հոդված 40.14. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձին փոխարինելուց հրաժարվելը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձին փոխարինելուց հրաժարվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Հոդված 40.15. Տեղամասային կենտրոնում գտնվելու կանոնները խախտելը

1. Քվեարկության նախապատրաստման, քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղամասային կենտրոնում կամ քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձի կողմից տեղամասային կենտրոն պարբերաբար մտնելը (եթե գործողությունը շարունակվել է բանավոր նախազգուշացումից հետո) կամ տեղամասային կենտրոնում ապօրինի գտնվելը (եթե գործողությունը շարունակվել է տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջը ներկայացնելուց հետո)՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

2. Քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով իր վկայականը դիտավորությամբ տեսանելի ձևով չկրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Քվեարկության օրը վիճակահանությամբ գործառույթների բաշխման համար նախատեսված թերթիկներ, եթե տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը 1000-ից ավել է:

Ցուցակ 1	Ցուցակ 2
Քվեաթերթիկ 1	Քվեաթերթիկ 2
Քվեատուփ	

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմակերպելու է շրջիկ արկղի միջոցով քվեարկություն, ապա «Քվեաթերթիկ 2» գրությամբ թերթիկը պետք է փոխարինել ստորև ներկայացված թերթիկով:

Քվեաթերթիկ և շրջիկ արկղ

Քվեարկության օրը վիճակահանությամբ գործառույթների բաշխման համար նախատեսված թերթիկներ, եթե հանրաքվեի տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը 1000-ից պակաս է:

Ցուցակ 1	
Քվեաթերթիկ 1	
Քվեատուփ	

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմակերպելու է շրջիկ արկղի միջոցով քվեարկություն, ապա դատարկ թերթիկը պետք է փոխարինել ստորև ներկայացված թերթիկով:

Շրջիկ արկղ

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու գործում անհրաժեշտ է ոչ միայն իրազեկ լինել ոլորտը կարգավորող իրավահարաբերություններին, այլև կարևոր է տիրապետել այնպիսի հմտությունների, որոնք արդյունավետ կդարձնեն հանձնաժողովի աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու գործում ուշադրության կենտրոնում պետք է լինեն.

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմակերպչական իմացությունը մեզ օգնում է ճիշտ ժամանակին կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու և գործընթացները կառավարելու գործում: Կառավարման այս հմտությունները թույլ կտան հարթ և արդյունավետ ճանապարհով ուղղորդվել տարբեր իրավիճակներում:

Անցանկալի օրինակներ տեղամասային կենտրոնում հանդիպած դեպքերից.

Իրավիճակ 1

Տեղամասային կենտրոնում կազմակերպչական հրահանգներ է տալիս դիտորդը, իսկ հանձնաժողովի նախագահը և քարտուղարը չեն կարողանում պահպանել կարգ ու կանոն տեղամասային կենտրոնում, վստահված անձինք անընդհատ միջամտում են ամփոփման աշխատանքներին:

Իրավիճակ 2

ՏԸՀ նախագահն իրեն է վերապահում որոշումներ կայացնելու և ղեկավարելու դերակատարումը՝ անհավասար պայմաններ ստեղծելով հանձնաժողովի անդամների միջև, կայացնում է միանձնյա որոշումներ և թելադրում իր կանոնները:

ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՒՍԱՓԵԼ ՆՄԱՆԱՏԻՊ ՈՉ ՑԱՆԿԱԼԻ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՑ

Առաջին հայացքից, ամեն ինչ պարզ է, սակայն հանձնաժողովի ղեկավար կազմը, պետք է ունենա կազմակերպչական հմտություններ, որպեսզի կարողանա աշխատանքները կազմակերպել արդյունավետ:

Նախ՝

- Պետք է Ձեր խոսքը վստահություն ներշնչի
- Պետք է պահեք արդարության և խստության սկզբունքը
- Պետք է կարողանաք հաղորդակցվել և և արագ կողմնորոշվել

Ինչպիսի՞ հատկություններ պետք է ունենա ղեկավարը

- **Կողմնորոշվելու**
- **Համագործակցելու**
- **Որոշումներ կայացնելու**

Կա՞ն արդյոք կանոններ, որոնք կիրառելուց կարելի է առավել արդյունավետ դարձնել հաղորդակցությունն ու բանակցությունը!

Այո, կան! Նշենք դրանցից մի քանիսը.

- Լսել դիմացինին, հնարավորություն տալ արտահայտվելու,
- Քայլեր ձեռնարկել դիմացինի հակակրանքը կամ ագրեսիան թուլացնելու համար,
- Զերծ մնալ բացասական գնահատականներ տալուց,
- Ներկայացնել սպասվելիք արդյունքը և խնդիրը,
- Հեռու մնալ վարկաբեկող քայլերից, թույլ տալ, որ դիմացինը գա հանգուցալուծման,
- Գնահատել արարքները, այլ ոչ թե՝ անձին,
- Դրսևորել հանգիստ և վստահ պահվածք,
- Չխուսափել ներողություն հայցելուց և շնորհակալություն հայտնելուց: Դա զինաթափում է դիմացինին, հարգանք է առաջացնում և վստահություն ներշնչում

Տեղամասային կենտրոններում անհամաձայնությունների պատճառները և ներգրավված կողմերը կարող են լինել տարբեր՝ ՏԸՀ անդամներ, դիտորդներ, վստահված անձինք, քաղաքացիներ, լրագրողներ:

Մարդիկ իրենց բնույթով տարբեր են և դա արտահայտվում է, թե՛ գաղափարական, և թե՛ գործնական մոտեցումների և հետաքրքրությունների դեպքում: Տեղամասային կենտրոնում առաջ քաշած հարցերը հաճախ ունենում են տարբեր հետաքրքրություններ, ուստի միշտ կարող են լինել անհամաձայնություններ ու կոնֆլիկտային իրավիճակներ:

Երբ կողմերը պատրաստ են ողջամտորեն քննարկելու միմյանց տեսակետները, անհամաձայնությունները կարող են հանգուցալուծվել կողմերին ձեռնտու լուծմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ 3

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ. 4

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ____ 4

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 5

ՎԱՏԱՀՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ԴԻՏՈՐԴՆԵՐ, ԱՅՑԵԼՈՒՆԵՐ ԵՎ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ 10

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿ 17

ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՆԵՐ 22

ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆԱՑՈՒՄԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 23

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ 24

ՆԱԽՈՐԴ ՕՐՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ 24

ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՍՏԱՆԱԼԸ 24

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ 25

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 27

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ 27

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԿԻՋԲԸ 32

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ 33

ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 43

ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ 43

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 43

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ 45

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 45

ՀԱԿԻՐՃ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ 46

ԱՆՁԱՆՑ ՆԵՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 46

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄԸ 48

ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ 51

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ) ԲՈՂՈՔԱՐԿԵԼԸ 55

ՀԱՎԵԼՎԱԾ 1 57

ՀԱՎԵԼՎԱԾ 2 61

ՀԱՎԵԼՎԱԾ 3 63

ՀԱՎԵԼՎԱԾ 4 70

ՀԱՎԵԼՎԱԾ 5 72